

## ՋՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ վճռաբեկ դատարանի դատավորի օգնական  
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի  
իրավունքի և քաղաքականության ինստիտուտի  
քրեական և քրեական դատավարության իրավունքի  
ամբիոնի ասպիրանտ



### ԴԱՏԱՎՃՈՒԻ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԱԿՏԻ ՏԵՂԸ ԻՐԱՎԱԿԻՐԱՈՒ ԱԿՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Գիտական հոդվածը նվիրված է դատավճռի՝ որպես արդարադատության իրականացման ակտի, և այլ իրավակիրառ ակտերի փոխահարբերակցության հարցին: Հեղինակը, վերլուծելով իրավակիրառ ակտերին բնորոշ հատկանիշները, գալիս է եզրահանգման, որ դրանք վերաբերելի են նաև դատավճռին, որը հենց ենթադրում է կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի կիրառման ակտ: Ընդ որում, դատավճռում, բացի քրեական և քրեադատավարական նորմերից, կիրառման ենթակա են նաև այլ իրավունքի ճյուղերի նորմերը: Բացի այդ, հեղինակը, դասակարգելով քրեական դատավարության ընթացքում ընդունվող ակտերը, առանձնացնում է դատավճռին բնորոշ հատկանիշները, ինչը թույլ է տալիս հստակեցնելու դրա տեղը քրեադատավարական ակտերի համակարգում: Անփոփելով, հեղինակը եզրակացնում է, որ դատավճիռը գործը ըստ էության լուծող վերջնական դատավարական որոշում է, որը վերջնականորեն տալիս է քրեական դատավարության գլխավոր հարցի պատասխանը անձի մեղավորության կամ անմեղության մասին:

*Հիմնարար բառեր - դատավճիռ, որոշում, իրավակիրառ ակտ, քրեական դատավարություն:*

Քրեական գործերի քննության ինչպես մինչ-դատական այնպես էլ դատական փուլերում քրեադատավարական գործունեության անբաժանելի մասն է կազմում իրավական ակտերի ընդունումը (1): Քրեական գործերով վարույթ իրականացնելու ընթացքում ընդունվող որոշումները հանդիսանում են քրեական դատավարության նշանակության ապահովման միջոցներից մեկը: Եվ այդ իմաստով քրեադատավարական որոշումները հանդիսանում են իրավապահական մարմինների և դատարանների գործունեության կարևոր գործոն, որի միջոցով նրանք իրենց լիազորությունների շրջանակում մասնակցություն են ունենում հասարակության կառավարմանը (2):

Քրեական դատավարությունում միայն պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են որոշումներ կայացնելու եղանակով կյանքի կոչելու իրավական նորմերում ամրագրված պահանջները: Այդ մարմինները պարտավոր են ապահովել օրենքի պահանջի իրագործումը, որը պետք է ուղղված լինի քրեադատավարական խնդիրների լուծմանը: Քրեական գործերով վարույթ իրականացնելու ընթացքում իրավասու մարմինների կողմից ընդունված այդ ակտերը կրում են պար-

տադիր բնույթ պետական մարմինների և այլ անձանց համար: (Օրինակ՝ քր. դատ օր. 55-րդ հոդվածի 5<sup>1</sup>-րդ կետ): Բացի այդ, օրենքը նաև պարտադրում է իրավասու մարմիններին որոշակի հանգամանքների դեպքում ընդունել քրեադատավարական օրենքով նախատեսված որոշակի ակտեր (Օրինակ՝ քր. դատ օր 90-րդ հոդվածի 1-ին մաս):

Սակայն իրավական նորմերը, այդ թվում՝ քրեաիրավական, որպես կանոն չեն կարող ինքնուրույնաբար, իրենք իրենցով կենսագործվել, այլ պետք է կոնկրետացվեն և ստանան անհատականացված ուղղվածություն: Դատական ակտերը իրենց հերթին գրեթե առանց բացառության ունեն անհատական բնույթ: Միակ բացառությունը կազմում են Սահմանադրական դատարանի որոշումները, որոնք, համաձայն Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, կարող են ունենալ նորմատիվ բնույթ (3): Այս առումով, Ս.Ս.Ալեկսեյևը արդարացիորեն նշում է. «Իրավունքի կիրառումը յուրահատուկ կառավարչական գործունեություն է, որը ունի հատուկ խնդիրներ: Նա ուղղված է իրավական նորմերի կենսագործմանը, ինչպես նաև նման կարիք առաջանալու դեպքում հասարակական հարաբերություն-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

ների անհատական կարգավորմանը» (4):

Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի մասին օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտ է հանդիսանում նաև դատարանի կողմից կայացված դատավճիռը: Ըստ այդ օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի. «Անհատական ակտ է սույն հոդվածի առաջին մասում նշված մարմինների՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած իրավական այն ակտը, որն ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար, չի պարունակում իրավական նորմ և սահմանում է վարքագծի կանոններ միայն դրանում ուղղակի անհատապես նշված (նախատեսված) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական կամ համայնքային հիմնարկների (այսուհետ՝ անձ) համար:

Անհատական իրավական ակտն ընդունվում է միայն նորմատիվ իրավական ակտի համաձայն և դրա սահմանած շրջանակում»:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է եզրակացնել, որ իրավակիրառ ակտը առաջին հերթին իրավասու պետական այն մարմնի որոշումն է կոնկրետ գործով, որին պետությունը լիազորել է իրավունքի կիրառման որոշակի հասարակական հարաբերությունների ոլորտում: Երկրորդ՝ իրավակիրառ ակտը պարունակում է պետաիշխանական հրամայական, որը պարտադիր է պահպանման, կիրառման համար այն անձանց կողմից, ում հասցեագրված է այն և ապահովվում է պետական հարկադրանքով: Երրորդ՝ իրավակիրառ ակտը ունի որոշակի օրենքով նախատեսված ձև: Չորրորդ՝ իրավակիրառ ակտը ուղղված է հասարակական հարաբերությունների անհատական կարգավորմանը, դրա մեջ հստակ անհատականացվում են (պերսոնաֆիկացվում) անձանց սուբյեկտիվ իրավունքները և պարտականությունները, և հինգերորդ՝ իրավակիրառ ակտը ընդունվում է (կայացվում) նորմատիվ իրավական ակտի հիման վրա:

Իրավակիրառ ակտերին բնորոշ վերը հիշատակված բոլոր չափանիշները ամբողջ ծավալով վերաբերելի են նաև դատավճռի նկատմամբ, և այս առումով մեզ համար ընդունելի է ՀՀ քրեական դատավարության դասագրքի հեղինակների այն տեսակետը համաձայն որի. «Հանդիսանալով իշխանական ակտ՝ դատավճիռը, այնուամենայնիվ, իրա-

վունքի նորմ չի ստեղծում: Իր իրավական բնույթով դատավճիռը, ինչպես և վարույթի ընթացքում ընդունվող մյուս բոլոր որոշումները, իրենից ներկայացնում է կոնկրետ իրավահարաբերությունների նկատմամբ իրավունքի նորմի կիրառման ակտ» (5):

Սակայն չի կարելի միայն սահմանափակվել նշելով այն ընդհանուրը, ինչը մոտեցնում է դատավճռին, պետական մարմինների կայացրած այլ իրավակիրառ ակտերին. հարկավոր է նաև բացահայտել այն առանձնահատկությունները, որոնք տարբերում են դատավճիռը պետական մարմինների այլ ակտերից: Այս առումով դատավճիռը, հանդիսանալով անհատական իրավակիրառ ակտ, ունի որոշակի տարբերություններ պետական իշխանության այլ մարմինների կողմից ընդունվող ակտերից, և որոշ հատկանիշներ բնորոշ են միայն դատավճռին. դրանք են՝

- դատավճիռը կայացվում է միայն դատարանի կողմից,
- դատավճռի կայացումը կարգավորվում է քրեադատավարական օրենսդրության կանոններով,
- դատավճիռը, մտնելով օրինական ուժի մեջ, ձեռք է բերում օրենքի ուժ կոնկրետ գործի համար,
- դատավճռով կարող են իրագործվել քրեաիրավական նորմերը կոնկրետ անձի նկատմամբ (անձին մեղավոր ճանաչել, պատիժ նշանակել և այլն):

Հաշվի առնելով շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ դատավճիռը, հանդիսանալով իրավակիրառ ակտ, իրենից ներկայացնում է դատարանի՝ որպես պետական իշխանության մարմնի, կոնկրետ քրեական գործով, օրենքով նախատեսված ձևով և դրա հիման վրա արտահայտված պաշտոնական որոշում, որը ուղղված է հասարակական հարաբերությունների անհատական կարգավորմանը և իրացնում է գործող իրավական նորմը տվյալ կոնկրետ դեպքի նկատմամբ: Հարկ ենք համարում նշել, որ իրավական բնույթով դատավճիռը հանդիսանում է ոչ միայն քրեադատավարական և քրեաիրավական նորմերի կիրառման ակտ, այլ դատավճռում կիրառվում են նաև քաղաքացիական իրավունքի (քաղաքացիական հայցի լուծման մասով), ընտանեկան իրավունքի (Անչափահասների, անաշխատունակ անձանց խնամքի իրավունքի հարցի լուծումը)<sup>1</sup>, և իրավունքի այլ ճյուղերի նորմե-

րը:

Բացի դատավճռից, քրեական դատավարության թե՛ մինչդատական և թե՛ դատական վարույթների ընթացքում ընդունվում են բազմատեսակ որոշումներ, որոնք պարունակում են իրավական հարցերի պատասխաններ, ինչը թույլ է տալիս դրանք տարբերակել այնպիսի դատավարական ակտերից, ինչպիսին են քննչական և դատավարական գործողությունների արձանագրությունները, որոնցում հաստատվում է գործողության կատարման փաստը, բովանդակությունը, քննչական գործողությունների արդյունքները և այլն (6):

Ինչպես նկատում է ռուս դատավարագետ Ի.Ա.Օստապենկոն, քրեական դատավարության շրջանակներում որոշումների ընդունումը բնութագրվում է որպես պետաիշխանական, մտավորկամայական, ֆորմալ-տրամաբանական հոգեբանական գործունեություն: Ընդ որում, պաշտոնատար անձի որոշումը՝ որպես իրավակիրառական գործունեության արդյունք, պետք է արտացոլի ոչ թե այդ անձի կարծիքը, այլ նրա հանդավածությունը, վստահությունը, որ որոշման հիմքում դրված ապացույցները գնահատված են ճիշտ, փաստերը հաստատվել են օրենքի պահանջներին համապատասխան, և նշված որոշման ընդունումը համապատասխանում է իրավունքի կարգադրանքի պահանջին (7):

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը պարունակում է 100-ից ավել քրեադատավարական հարցեր, որոնց լուծման համար քրեական գործով վարույթի ընթացքում կարող են ընդունվել բազմատեսակ որոշումներ:

Նման որոշումների շարքին է դասվում նաև դատավաճիռը: Ուստի, մեր կարծիքով, կարևոր տեսական և գործնական նշանակություն ունի նաև քրեադատավարական ակտերի դասակարգման համատեքստում պարզելը դատավճռի հարաբերակցությունը այդ ակտերի հետ, ինչպես նաև հստակեցնելը դրա տեղը քրեադատավարական ակտերի համակարգում:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ «դատավճիռը դատական նիստում կայացված առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի որոշումն է (ընդգծումը՝ Ջ.Հ.) ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության, նրան կատմամբ պատիժ կիրառելու կամ չկիրառելու և

այլ հարցերով»:

Այս առումով Օրենսգիրքը «որոշում» հասկացությունը օգտագործում է այնպիսի դատավարական ակտերի բնույթի բացահայտման համար, ինչպիսին են դատավճիռները, դատարանների կողմից ընդունվող այլ ակտերը, նախաքննության մարմնի կողմից կայացվող ակտերը և այլն՝ միավորելով դրանք *դատավարական որոշումներ* հասկացության ներքո (6-րդ հոդվածի 7-րդ կետ):

Այսպիսով, *դատավարական որոշումներ* հասկացությունը հանդիսանում է սեռային հասկացություն, որը արտացոլում է դրանց՝ քրեական դատավարության ընթացքում կայացվող ակտ լինելու հանգամանքը, իսկ դատավճիռը, այլ որոշումները՝ թե՛ դատարանի և թե՛ նախաքննական մարմինների կողմից ընդունվող, հանդիսանում են դատավարական որոշումների տեսակներ:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը, բացի նշված դասակարգումից, քրեադատավարական ակտերը դասակարգում է մեկ այլ հիմքով ևս՝ օգտագործելով «վերջնական որոշում» և «գործն ըստ էության լուծող ակտեր» հասկացությունները, ընդ որում, ըստ այդ դրույթի, դատավճիռը հանդիսանում է գործն էստ էության լուծող ակտ:

ՀՀ վճռաբեկ դատարանը, մեկնաբանելով վերոնշյալ օրենքի դրույթները, իր՝ *Չահրադ Ոսկանյանի և մյուսների* վերաբերյալ գործով ձևավորել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Մեջբերված քրեադատավարական նորմերի համակարգային վերլուծությունից երևում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերը վերջնական որոշման տեսակներից են: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 10-րդ կետի տառացի մեկնաբանությունից երևում է, որ «գործն ըստ էության լուծող որոշում» հասկացությունն օրենսդիրը տարբերակել է «քրեական վարույթը շարունակելը բացառող որոշում» հասկացությունից, բացի այդ, վկայակոչված քրեադատավարական դրույթի վերլուծությունից հետևում է նաև, որ գործն ըստ էության լուծող դատական ակտերի հասկացությունը սահմանելիս օրենսդիրը թվարկել է այն ակտերը, որոնք կայացվում են բացառապես դատարանի կողմից գործի՝ ըստ էության քննության փուլում» (8):

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ դատավճիռը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, հանդիսանում է դատարանի կող-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

մից կայացված, գործը ըստ էության լուծող վերջնական դատավարական որոշում:

Քրեադատավարական գործունեության ընթացքում ընդունվող այլ ակտերը դատավճռի հետ ունեն ընդհանուր հատկանիշներ, ինչպես նաև որոշ առանձնահատկություններ, ուստի և դատավճռի և քրեադատավարական այլ ակտերի փոխհարաբերակցության հարցը պետք է դիտարկվի այդ տարբերությունների վերհանման ճանապարհով: Նշված բնույթով տարբեր դատավարական ակտերի ընդհանրությունները և առանձնահատկությունները պարզելու, դրանց յուրաքանչյուրի տեղը և գործառնական դերը քրեադատավարական հարաբերությունների կարգավորման համակարգում որոշելու համար դատավարական ակտերը ենթարկվում են դասակարգման, որն ունի ինչպես տեսաճանաչողական, այնպես էլ կիրառական նշանակություն:

Դրա հետ մեկտեղ հարկավոր է նշել, որ որոշ հատկանիշներ բնորոշ են քրեական դատավարության ընթացքում կայացվող բոլոր որոշումներին: Ըստ ռուս դատավարագետ Ա.Վ. Բունինսկայի՝ դրանք են. 1. բոլոր դատավարական որոշումները (դատավճիռ, դատարանի որոշում) կայացվում են քրեական դատավարությանը մասնակցող պետական մարմնի կողմից, 2. բոլոր դատավարական որոշումներին ներկայացված է օրինականության, հիմնավորվածության և պատճառաբանվածության պահանջը, 3. բոլոր այդ ակտերը ընդունվում են օրենքով նախատեսված դատավարական կարգով (9):

Մեր կողմից նպատակահարմար ենք գտնում ավելացնել նաև հետևյալ հատկանիշները. 4. դրանք առաջացնում և դադարեցնում են որոշակի քրեադատավարական հարաբերություններ, 5. պարզված փաստական հանգամանքների հիման վրա բովանդակում են իրավական հարցերի պատասխաններ:

Ռուս դատավարագետ Լուպինսկայայի մտեցման համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ընդունվող որոշումները կարելի է դասակարգել ըստ

- բովանդակության,
- գործառնական նշանակության,
- որոշում կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների,

• կայացման պահի և ակտի գործողության ժամկետի,

• իրավաբանական ուժով և հետևանքներով:  
Ընդ որում, ցանկացած որոշում կարող է բնորոշվել՝ ըստ մի քանի դասակարգող հատկանիշների (10):

1. Ըստ բովանդակության դատավարական ակտերը կարելի է դասակարգել հիմնական և օժանդակ որոշումների: Հիմնական որոշումների շարքին պատկանում են այն ակտերը, որտեղ իրավասու մարմինները հավաքված ապացույցների և հաստատված փաստերի հիման վրա պատասխանում են քրեական գործի հիմնական հարցերին (տեղի է ունեցել արդյոք հանցագործություն, կատարել է արդոք այդ հանցագործությունը ամբաստանյալը և այլն): Այդ հարցերի պատասխանը իրենից ներկայացնում է քրեաիրավական վեճի առարկան: Դրա հետ մեկտեղ հիմնական այդ ակտերում լուծվում են նաև լրացուցիչ հարցեր, որոնք, սակայն, բխում են հիմնական հարցերից, օրինակ՝ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո ապացույցների հետագա ճակատագրի հարցը:

Օժանդակ դատավարական ակտերը օժանդակում են քրեական գործի հիմնական հարցերի օրինական և հիմնավոր լուծմանը: Այդ ակտերի շարքին կարելի է դասել, օրինակ, քննչական գործողություններ կատարելու մասին որոշումները, դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին և այլն:

Այս առումով դատավճիռը հանդիսանում է հիմնական դատավարական ակտ այն պատճառով, որ դրանում լուծում են ստանում քրեական դատավարության առանցքային հարցերը՝ անձի մեղավորության կամ անմեղության, սակայն դրա հետ մեկտեղ դատավճռում լուծվում են մի շարք լրացուցիչ հարցեր: Իսկ դատարանի կողմից դատական քննության ժամանակ կայացված ակտերը դատավճռի հանդեպ ունեն օժանդակ բնույթ: Դրանց օրինակը կարող են լինել դատարանի որոշումները որոնք ուղղված են ապացույցների հավաքմանը, հետազոտմանը, մասնակիցների իրավունքների պաշտպանությանը (դատարանի որոշումը վկային դատարան հրավիրելու և հարցաքննելու վերաբերյալ, փորձաքննություն նշանակելու մասին որոշումը):

2. Դատավարական որոշումները կարելի է դասակարգել նաև ըստ իրենց գործառնական նշանակության: Ըստ Լուպինսկայայի որոշումների՝ գործառնական նշանակության բովանդակությունը

www.journal.lawinstitute.am

կայանում է նրանում, թե վարույթի, որ փուլում են դրանք ընդունվում և ինչ ազդեցություն են ունենում գործի հետագա ընթացքի վրա (11): Այդ իմաստով որոշումները կարող են լինել սկզբնական, միջանկյալ և եզրափակիչ:

Սկզբնական որոշումները իրավունք են վերապահում վարույթ իրականացնող մարմիններին՝ նախաձեռնելու գործողություններ, որոնք իրենց բովանդակությամբ հանգեցնում են քրեադատավարական որոշակի փուլի սկսելուն (օրինակ՝ քրեական գործի հարուցման մասին որոշում): Միջանկյալ որոշումները ընդունվում են քրեական դատավարական փուլերի ընթացքում և լուծում են միջանկյալ հարցեր, օրինակ՝ քրեական գործի հարուցման փուլում կայացվող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի կարգով հետազոտման համար վերցրած նմուշները քննիչի որոշման համաձայն ուղարկվում են փորձաքննության: Իսկ եզրափակիչ որոշումները ավարտում են տվյալ փուլը և հիմք են ստեղծում գործի՝ այլ փուլ տեղափոխվելու համար:

Հետևաբար, դատավճիռը ըստ դրա գործառական նշանակության, քրեադատավարական եզրափակիչ որոշում է, քանի որ ավարտում է դատաքննության փուլը և հիմքեր է ստեղծում գործը դատավարության այլ փուլ տեղափոխելու համար (կատարման փուլ, իսկ բողոքարկման դեպքում՝ վերանայման փուլ):

3. Որոշումները կարող են դասակարգվել՝ ըստ այդ ակտերը կայացնելու իրավասություն ունեցող սուբյեկտների: Դատարանը, դատախազը և քրեադատավարական վարույթի այլ հանրային մասնակիցները իրենց գործունեության ընթացքում իրավասու են ընդունելու միայն այն որոշումները, որոնք լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով: Քրեադատավարական ակտերի համակարգում դատավճիռը այն փաստաթուղթն է, որը կարող է կայացվել բացառապես դատարանի կողմից, այն էլ դատական քննության արդյունքում: Օրինականության սկզբունքը ենթադրում է լիազորությունների հստակ տարանջատում, և ոչ մի այլ դատավարության սուբյեկտ չի կարող միջամտել դատավճիռ կայացնելու գործընթացին: Նշված ելակետային դրույթը հանդիսանում է դատական համակարգի գործունեության կարևոր երաշխիքներից մեկը:

4. Ըստ կայացման պահի (դատավարական

փուլի)՝ քրեադատավարական ակտերը կարող են բաժանվել երկու մեծ ենթախմբի՝ ընդունված մինչդատական վարույթում և դատական վարույթում: Ինչպես հայտնի է, դատավճիռը կայացվում է միայն դատական վարույթում, այն էլ դատաքննության արդյունքում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 356-րդ հոդվածի համաձայն՝ ամբաստանյալի վերջին խոսքը լսելուց հետո դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ: Դատարանը, գտնելով, որ պետք է կայացվի դատավճիռ, այն ստորագրելուց հետո վերադառնում է դատական նիստերի դահլիճ, և նախագահողը հրապարակում է այն:

Մեր կարծիքով, դատական վարույթի և մինչդատական վարույթի փոխհարակցությունը որոշում է դատավճիռի և մինչդատական վարույթի ընթացքում կայացված այլ դատավարական ակտերի փոխհարաբերության հարցը: Դատական քննության փուլը քրեական դատավարության կենտրոնական փուլն է, որի ընթացքում դատարանը ըստ էության քննում և լուծում է քրեական գործը:

Օրինակ, մեղադրական եզրակացությունը, հանդիսանալով մինչդատական վարույթի ընթացքում կայացվող ակտ եզրափակում է մինչդատական վարույթը, իսկ դատավճիռով, որով ավարտվում է դատական վարույթը, ամփոփում է ոչ միայն դատարանի գործունեությունը դատական քննությունում, այլ նաև նախաքննական մարմինների և դատախազության գործունեությունը: Հայտնի է, որ դատավարության ամեն մի փուլ լուծում է իր հատուկ խնդիրները: Անկասկած, դատական քննության փուլին նախորդող բոլոր փուլերը ունեն կարևոր նշանակություն, քանի որ դատարանի գործունեությունը կախված է ինչպես արդյունավետ և որակյալ նախաքննությունից, այնպես էլ դատախազական գործունեությունից, սակայն դրա հետ մեկտեղ այդ փուլերը դատաքննության փուլի նկատմամբ ունեն օժանդակ բնույթ և չեն կանխորոշում վերջինիս արդյունքները:

Այս առումով լիովին ընդունելի է ռուս դատավարագետ Յու.Գրոշեվոյի այն կարծիքը, համաձայն որի՝ դատավճիռը հանդիսանում է դրա կայացմանը նախորդած քրեադատավարական ամբողջ գործունեության արդյունքը (12): Իսկ դատավճիռի օրինականությունը և հիմնավորվածությունը կապված է քրեական գործերի քննության ընթացքում քրեական և քրեադատավարական

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

օրենսդրության պահանջների պահպանման հետ, այսինքն՝ ամբողջ քրեադատավարական գործունեության (13): Սակայն նշված հարցի կապակցությամբ առկա է այլ կարծիք ևս. օրինակ, Գ.Ն.Ագաջևան կարծում է, որ դատավճռի կայացումը ամփոփում է միայն դատարանում գործի քննությունը (14): Սակայն, մեր կարծիքով, նման պարագայում անհասկանալի է մնում, թե արդյոք դատավճռի կայացման համար որևէ նշանակություն ունեն նախաքննության ընթացքում հավաքված քրեական գործի նյութերը, թե՛ ոչ:

Ինչ վերաբերում է դատավճռի գործողության ժամկետին, ապա պետք է նշել, որ այն ընդունվում է անժամկետ: Այսինքն՝ դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո սահմանափակված չէ որևէ տեսակի ժամկետով, և եթե այն չի բեկանվում բարձր դատարանների կողմից, ապա գործում է անժամկետ:

5. Քրեադատավարական ակտերը կարելի է դասակարգել նաև ըստ իրավաբանական ուժի և հետևանքների: Քննիչի, դատախազի և դատարանի կողմից որոշում ընդունելու պահից դրանք մտնում են օրինական ուժի մեջ, ինչն էլ իր հերթին հանգեցնում է դրանց ի կատար ածմանը (օրինակ, քննիչի որոշումը որոշակի դատավարական գործողություն կատարելու վերաբերյալ): Դատավճռի համար օրինական ուժի մեջ մտնելու կանոնները տարբերակված են այլ ակտերից, որը պայմանավորված է դատավճռի՝ որպես արդարադատության իրականացման կարևորագույն ակտի առանձնահատկություններով: Ինչպես հայտնի է, դատավճռի հրապարակումից մեկ ամիս հետո այն մտնում է օրինական ուժի մեջ և ձեռք է բերում այնպիսի հատկություններ, որոնք բնորոշ են միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռին. դրանք են դատավճռի բացառիկությունը, համապարտադիրությունը, նախադատելիությունը և ճշմարտացիության կանխավարկածը:

Դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո այն կարող է վերանայվել միայն բացառիկ վարույթների շրջանակներում այն էլ բացառիկ հիմքերի առկայության պայմաններում: Իսկ ինչ վերաբերում է դատավճռի հետևանքներին, ապա պետք է նշել, որ այդ ակտի եզրափակիչ մասում դատարանի կողմից գետեղված հրամայականները ենթակա են պարտադիր կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում, իսկ դրանք

չկատարելու դեպքում անձը կարող է ենթարկվել ընդհուպ մինչև քրեական պատասխանատվության:

Բացի դատավճռի վերոնշված առանձնահատկություններից, որոնք տարբերում են դատավճիռը քրեական դատավարության ընթացքում ընդունվող այլ ակտերից, մեր կարծիքով, դատավճռի հիմնական առանձնահատկություններից է կայանում նաև այն հանգամանքը, որ այն հանդիսանում է քրեական պատասխանատվության հիմքերի ամրագրման միջոց: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ «Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները»: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի ուժով դատարանը մեղադրական դատավճիռ կայացնելիս պետք է պատասխանի հետևյալ հարցերին. ապացուցված է արդյոք արարքը, որի կատարման մեջ մեղադրվում է ամբաստանյալը, այդ արարքը համապատասխանում է արդյոք քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերի հատկանիշներին, ապացուցված է արդյոք ամբաստանյալի կողմից այդ արարքը կատարելը, ապացուցված է արդյոք ամբաստանյալի մեղավորությունը տվյալ հանցանքը կատարելու մեջ, և եթե այո, ապա քրեական օրենսգրքի որ հոդվածով, մասով, կետով է նախատեսված այն: Նշված հարցերին դրական պատասխանելու դեպքում հաստատվում է հանցակազմի առկայությունը, որն էլ հանդիսանում է քրեական պատասխանատվության հիմքը:

Հետևաբար, դատավճիռը հանդիսանում է միակ քրեադատավարական փաստաթուղթը, որը սահմանում է քերական պատասխանատվության իրագործման հիմքը՝ իրավաբանական պատասխանատվության ամենախիստ ձևը, և այս առումով հարկավոր է նշել, որ միայն դատարանի մեղադրական դատավճռի կայացմամբ է իրացվում պետության իրավունքը՝ պատժելու հանցանք կատարած անձին և դրանց թղթակցող հանցագործի պարտականությունը՝ պատասխանատվություն կրել իր արարքի համար:

Այս հարցի կապակցությամբ Օ.Յու.Գ-այը արդարացիորեն նշում է. «Մյուս քրեադատավարական ակտերը, օրինակ, քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշումը միայն հաստատում է



քրեական մեղադրանք ներկայացնելու հիմքերի բացակայությունը, այսինքն՝ բացասական է լուծում մեղավորության հարցը: Դատաքննության փուլում դատարանի կողմից գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը ընդհանրապես չի լուծում ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, քանի որ որոշումը կայացվում է այն ժամանակ, երբ այդ հարցերի քննարկումը բացառված է, մասնավորապես՝ ամբաստանյալի մահվան դեպքում, երբ անձի նկատմամբ կա նույն մեղադրանքով օրինական ուժի մեջ մտած դատավճիռ մասնավոր մեղադրանքի գործերով կողմերի հաշտության դեպքում: Դրականորեն հավաստել անձի մեղավորությունը նրանք չեն կարող. նման հավաստումը կարող է տեղի ունենալ միայն դատավճռում: Դրանով է որակապես տարբերվում դատավճիռը մյուս բոլոր ակտերից» (15):

Ինչպես հայտնի է, դատավճռում, բացի քրեական դատավարության հիմնական հարցից (մեղավորության կամ անմեղության) լուծում են ստանում նաև մի շարք այլ հարցեր (պատժի, իրեղեն ապացույցների ճակատագրի և այլն): Նշված հարցերի շարքին է պատկանում նաև գործով ներկայացված քաղաքացիական հայցի լուծումը: Ոչ մի այլ քրեադատավարական փաստաթուղթ չի պատասխանում ներկայացված քաղաքացիական հայցի բավարարման, մերժման կամ առանց քննության թողնելու վերաբերյալ հարցերին (ՀՀ քր. դատ. օր.-ի 163-րդ հոդված): Նշվածը, մեր կարծիքով, ևս տարբերում է դատավճիռը այլ քրեադատավարական ակտերից:

Իրավաբանական գրականությունում գերիշխում է այն տեսակետը, համաձայն որի՝ դատավճիռը պատկանում է քրեադատավարական հիմնական որոշումների շարքին, այսինքն՝ պատասխանում է **հիմնական հարցերին**, որոնք իրենցից ներկայացնում են քրեաիրավական վեճի առարկան, դրա բովանդակությունը: Քրեական դատավարության տեսությունում առկա չէ միանշանակ դիրքորոշում, թե որ հարցը կամ հարցերն են համարվում քրեական դատավարության հիմնական հարցերը:

Սկզբում նշենք, որ մենք համակարծիք ենք այն մտտեցումանը, որ դատավճիռը տալիս է քրեական դատավարության գլխավոր հարցի՝ անձի մեղավորության կամ անմեղության հարցի պատասխանը: Սակայն սահմանադրական էական փոփոխությունները հանգեցնում են քրեական դատավարության

գաղափարախոսության փոփոխությունների: Բացի այդ, մեր կարծիքով, դեռ 21-րդ դարի սկզբին իրավացիորեն նշում էր ռուս գիտնական Ն.Պողոլնին, ներկայումս քրեական դատավարությունում տեղի է ունենում գաղափարախոսությունների փոփոխություն (16):

Օրինակ, Ն.Գ.Մուրատովան գրում է. «Քրեական գործերով դատարանը լուծում է մեկ հանրային բնույթի վեճ՝ քրեաիրավական, պետության և ենթադրաբար հանցագործություն կատարած անձի միջև: Հենց միայն դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող մարմին, ճանաչում է անձին մեղավոր կամ անմեղ, նշանակում պատիժ կամ ազատում վերջինից» (17):

Ընդհանուր առմամբ ընդունելի մտտեցում է, սակայն մենք հակված ենք Ֆ.Բագատուտդինովի կարծիքին, ով քրեական դատավարությունում առանձնացնում է երկու կարևոր հարց. «Հարկավոր է ընդունել, որ մեղադրանքի կողմի համար քրեական դատավարության հիմնական հարցը անձին մեղսագրվող արարքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու հարցն է: Սակայն պետք է առանձնացնել ինքնուրույն և հավասարազոր մեկ այլ քրեական գործի համար ոչ պակաս կարևոր հարց, որը մասնավոր բնույթի է՝ անձի իրավունքների և շահերի ապահովումը և պաշտպանությունը քրեական դատավարությունում» (18):

Դեռ նախասոցիալիստական Ռուսաստանում այնպիսի գիտնականներ, ինչպիսին են Ի.Յա.Ֆոխինցկին, Վ.Կ.Սլուչեվսկին և ուրիշները, ընդունում էին, որ քրեական դատավարության ոլորտում գոյություն ունեն երկու հիմունքներ, և փորձում էին բացատրել դրանց էությունը (19): Օրինակ, Ի.Յա.Ֆոխինցկին գտնում էր, որ առկա է քրեական դատավարության երկու հիմունք՝ հանրային կամ հասարակական և մասնավոր (անձնական) (20): Հանրային հիմունքի բնույթը բացատրվում էր մի կողմից որպես համապետական շահերի պաշտպանություն, որի բովանդակությունը բնորոշվում էր ճշմարտության հաստատմամբ, որպեսզի թույլ չտրվի անմեղին քրեական պատասխանատվության ենթարկելը: Մյուս կողմից՝ կողմերին ցուցաբերել պետական աջակցություն, որը իրականացվում էր հանուն թե՛ հասարակության, թե՛ մասնավոր շահի: Նշվածի հիմքում ընկած էր հետևյալ թեզիսը՝ թույլ չտալ անձի ապօրինի մեղադրում կամ արդարացում: Եվ եթե հանրային հիմունքում ար-

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ**

տահայտված է անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումը, ապա մասնավորի՝ պետական իշխանության ինքնասահմանափակումը (21)։

Այսօր քրեական դատավարությունը հիմնականում կրում է հանրային բնույթ, այսինքն՝ քրեադատավարական իրավահարաբերությունները ծագում, զարգանում և դադարեցվում են իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կամարտահայտությամբ։ Դրա հետ մեկտեղ Գ.Գևորգյանը և Ս.Գիբրանյանը իրավագիտորեն նշում են, որ «Հանրային և մասնավոր հիմքերի հարաբերակցությունը քրեական դատավարության սկզբունքների ըմբռնման բանալին է» (22)։

Հանրայնության սկզբունքը երկար ժամանակ համարվում էր հիմնարար քրեական դատավարության գիտությունում, որը հաշվի առնելով՝ այսօրվա զարգացումները օբյեկտիվորեն չեն կարող գերակայող համարվել։ Հանրայնության հիմքը պետք է դիտարկվի ոչ այլ կերպ, քան անձի իրավունքների գերակայության լույսի ներքո՝ որպես օրենքով պաշտպանվող հասարակական արժեք։ Բացի այդ, մասնավոր հիմքը դիտվում է որպես հենարան հանրայինի համար, որովհետև բազմաթիվ մասնավոր շահերից է ձևավորվում հանրայինը, որն էլ, ըստ այդմ, չի կարող հակադրվել մասնավոր հիմքին։ Հետևաբար, ժողովրդավարական պետությունում մասնավոր ու հանրային հիմքերը չեն հակադրվում, այլ, կարելի է ասել, դրանք իրար հետ անխզելիորեն կապված են և լրացնում են միմյանց (23)։

Մեր կարծիքով, պետք է խոսել քրեական դատավարության հանրային և մասնավոր հիմունքների ոչ թե հակադրման, այլ դրանց համադրման մասին, և այդ առումով մեզ համար լիովին ընդունելի է ռուս դատավարագետ Ա.Պ.Գուսկովայի այն կարծիքը, ըստ որի՝ քրեական դատավարության սկզբունք պետք է համարել հանրային և մասնավոր հիմունքների համակցությունը (24)։

Դատավճիռը՝ որպես քրեական գործերով արդարադատության իրականացման արդյունք, ելնելով քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի համակցության պահանջից՝ պետք է ուղղված լինի ընդհանուր առմամբ հասարակության, այդ թվում, տուժողի, մեղադրյալի և այլ մասնակիցների շահերի պաշտպանությանը պետական այն մարմինների կողմից, որոնց վրա օրենքով դրված է մնան պարտականությունը։ Դա

բխեցվում է պետության սահմանադրական պարտականություններից, որոնց ուժով վերջինս պարտավոր է պաշտպանելու հանցագործությունից տուժած անձանց՝ ապահովելու նրանց դատական պաշտպանության մատչելիությունը, ինչպես նաև պատճառված վնասի հատուցումը, այսինքն՝ նշված իրավադրույթում է արտացոլվում հանցագործություններից տուժած անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության պետության դերը։

Հետևաբար կարելի է եզրահանգել, որ դատավճռում պետք է պահպանվի պետության և անձի շահերի խելամիտ հավասարակշռությունը, քրեական դատավարության հանրային և մասնավոր հիմունքների ներդաշնակ համադրությունը։ Իսկ հանրորեն վտանգավոր արարքի հետևանքով անձանց խախտված իրավունքների վերականգնումը կհամապատասխանի քրեական դատավարության ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր շահերին։ Այս առումով մենք կարևոր ենք համարում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հեղինակների կողմից առաջարկվող քրեադատավարական օրենսդրության նոր սկզբունքը՝ «Վարույթի հանրայնությունը» (հոդված 15-րդ), որի 1-ին մասը սահմանում է. «Վարույթի իրականացումը հանրային գործունեություն է, որի ընթացքում և արդյունքում ապահովվում է հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանությունը»։

Վերոնշյալից ելնելով՝ կարելի է եզրահանգել, որ դատավճիռը լուծում է հանրային իրավական վեճ, որի արդյունքում լուծվում է ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, մեղավոր ճանաչվածին պատժելու կամ անմեղ ճանաչվելու դեպքում արդարացնելու հարցը, ինչպես նաև մասնավոր բնույթի հարց՝ քրեական դատավարությունում անձի իրավունքների և օրինական շահերի ապահովման հարցը, որը պարունակում է քաղաքացիական հայցի մասով որոշում։

Այսպիսով, հիմք ընդունելով ամբողջ վերը նշվածը հեղինակը հնարավոր է համարում նշել այն առանձնահատկությունները, որոնք տարբերում են դատավճիռը այլ դատավարական ակտերից՝

- Դատավճիռը գործը լուծում է ըստ էության և տալիս է վերջնական պատասխան դատավարության կարևորագույն հարցին,
- Դատավճիռը հանդիսանում է միակ դատավարական ակտը, որում վերջնական և դրական



լուծվում է մեղադրյալի մեղավորության հարցը,

• Դատավճռի կայացումը ուղեկցվում է քրեական դատավարության դեմոկրատական բոլոր սկզբունքների պահպանմամբ,

• Դատավճռում լուծում է ստանում գործով ներկայացված քաղաքացիական հայցի ճակատագիրը,

• Դատավճռով ավարտվում է գործի՝ ըստ էության քննությունը առաջին ատյանի դատարանում,

• Դատավճիռը օրինական ուժի մեջ մտնելուց հետո ձեռք է բերում այնպիսի հատկություններ, ինչպիսին են դրա բացառիկությունը, համապարտադիրությունը, նախադատելիությունը և ճշմարտացիության կանխավարկածը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասը:

**Գրականություն**

1. Остапенко И. А. Приговор как итоговое решение по уголовному делу: дисс. .... канд. юрид. наук. Владимир, 2007, С. 11.
2. Чайковская М.А. Свойства приговора: монография. – Москва: Проспект, 2013, С. 6.
3. Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք/ Հ. Թովմասյանի և ուրիշն խմբագրությամբ, Եր., 2011, էջ 233:
4. Алексеев С.С. Проблемы теории права. Т. 2. Свердловск, 1973. С. 278.
5. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս- Երևանի պետ. համալս.- Եր.: ԵՊՀ հրատ., 2010, էջ 351:
6. Лупинская П.А. Решения в уголовном судопроизводстве. Их виды, содержание и формы. - М.: Юридическая литература, 1976, С. 10.
7. Остапенко И.А. նշված աշխատությունը. էջ 36:
8. ՀՀ վճարելի դատարանի՝ 2012 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԵԿԳ/0022/11/12 որոշում, կետ 11:
9. Бунина А. В. Приговор суда как акт правосудия. Его свойства: Дис. ... канд. юрид. наук. Оренбург, 2005, С. 22.
10. Лупинская П.А. նշված աշխատությունը. էջ 17:
11. Лупинская П.А. նշված աշխատությունը. էջ 20:
12. Грошевой Ю.М. Правовые свойства приговора – акта социалистического правосудия, Харьков, 1978, С. 13.
13. Куцова Э.Ф. Приговор, М., 1962, С. 6.
14. Агеева Г.Н. Приговор советского суда – акт социалистического правосудия, М., 1957, С. 9.
15. Гай О. Ю. նշված աշխատությունը. էջ 15:
16. Подольный Н. Новый УПК – новая идеология уголовного процесса // Российская юстиция. 2002, N 11, С. 2-3.
17. Муратова Н.Г. Система судебного контроля в уголовном судопроизводстве: Учебное пособие. - Казань: Казанский государственный университет, 2004, С. 8.
18. Багаудинов Ф. Отражение публичных и личных интересов в принципах уголовного судопроизводства // Уголовный процесс, 2002, N 4, С. 55.
19. Случевский В.К. Учебник русского уголовного процесса. - СПб., 1895, С. 45.
20. Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства: В 2-х томах. Т.1. - СПб., 1996, С. 11.
21. Վ.Վ. Վորոնինը նշում է, որ քրեական դատավարությունը պետք է ծառայի ինչպես հասարակական, պետական, այնպես էլ անձնական (մասնավոր) շահերին: Տե՛ս Воронин В.В. Становление, особенности и проблемы российского судопроизводства по делам частного обвинения. Автореферат дисс...канд. юрид. наук. - Екатеринбург, 2001, С. 17.
22. Ղազինյան Գ., Դիրանդյան Ս. Հանրայնության սկզբունքի տեղը և դերը քրեական դատավարության սկզբունքների համակարգում. Պետություն և իրավունք. թիվ 1(59) Երևան, ԵՊՀ, 2013թ, էջ 5:
23. Ղազինյան Գ., Դիրանդյան Ս. նշված աշխատությունը էջ 12:

24. Гуськова А.П. Публичное и частное в уголовном судопроизводстве // Механизм реализации норм Уголовно-процессуального кодекса Российской Федерации: проблемы и пути их разрешения: Межвуз. сб. - Ижевск: Детектив-информ, 2003, С. 13.

**Джон Айрапетян**

помощник судьи Кассационного Суда РА,  
аспирант кафедры уголовного  
и уголовно-процессуального права института  
права и политики Российско-Армянского  
(Славянского) университета

#### РЕЗЮМЕ

##### *Место приговора как акта осуществления правосудия в системе правоприменительных актов*

Научная статья посвящена проблеме соотношения приговора как акта правосудия с другими правоприменительными актами. Автор, анализируя особенности, которые свойственны правоприменительным актам, приходит к выводу, что эти черты в полной мере свойственны так же приговору суда, который является актом применения права к конкретным правоотношениям. Более того, в приговоре применяются нормы уголовного и уголовно-процессуального, а также других отраслей права. Кроме того, автор, классифицируя правовые акты, которые принимаются в процессе уголовно-процессуальной деятельности, выделяет те особенности, которые свойственны только приговору. Подводя итоги, автор приходит к выводу, что приговор является актом, который по существу и окончательно дает ответ на главный вопрос уголовного судопроизводства: вопрос виновности или невиновности подсудимого.

**Ключевые слова:** *приговор, решение, правоприменительный акт, уголовный процесс.*

**John Hayrapetyan**

assistant to a judge at Cassation court of Armenia,  
Post-graduate student of the Chair of Criminal Law  
and Criminal Procedural Law of the Institute of Law and Policy  
of the Russian-Armenian (Slavonic) University

#### SUMMARY

##### *Place of judgment as an act of administering justice in law enforcement acts system*

The scientific article is devoted to the problem of correlation of the judgment, as an act of justice with other law enforcement acts. Author analyzing features which are peculiar to law enforcement acts come to the conclusion that these characteristics fully inherent as well as to a court judgment, which is an act of application of the law to specific legal relations. Moreover, in the judgment not only applies the rules of criminal and criminal procedural law, but also other branches of law. In addition, the author by classifying legal acts, which can be adopted during the criminal procedure highlights those peculiarities that are unique to the judgment. Summing up, the author concludes that the judgment is an act that is substantially and finally gives the answer to the main question of criminal proceedings: the question of guilt or innocence of the defendant.

**Keywords:** *judgment, decision, law enforcement act, criminal procedure.*